ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Երկրների, տարածաշրջանների բնությունն ու հասարակությունն իրենց բաղադրիչներով համալիր ուսումնասիրում է.**

1) երկրաբնապահպանությունը
2) երկրաբանությունը
3) երկրաձևաբանությունը
4) երկրագրությունը

2 **Կողմնորոշված կողմնացույցի մագնիսական սլաքը հորիզոնի ո՞ր կողմն է ցույց տալիս.**

1) հարավային
2) արևմտյան
3) հյուսիսային
4) արևելյան

3 **Նկար 1.- ում Զ տառով նշված կետի աշխարհագրական կոորդինատները որո՞նք են:**

1) հվ. լ. 20° արլ. ե. 20°
2) հս. լ. 20° արմ. ե. 20°
3) հվ. լ. 20° արմ. ե. 20°
4) հս. լ. 20°արլ. ե. 20°



Նկ. 1

4 **Երկրի օրական պտույտի հետևանք է.**

1) պասսատների առաջացումը
2) մուսսոնների առաջացումը
3) ժամերի տարբերությունը
4) երկնքի ամպամածությունը

5 **Եթե տեղագրական քարտեզում հորիզոնականները խիտ դասավորություն ունեն, ապա այդ տեղամասում.**

1) լեռնալանջը բացակայում է
2) լեռնալանջը մեղմաթեք է
3) լեռնալանջը զառիթափ է
4) լեռնալանջը բուսազուրկ է

6 **1 : 7 000 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 8 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.**

1) 5,6 կմ
2) 56 կմ
3) 560 կմ
4) 5600 կմ

7 **Բնութագրումով որոշել Երկրի շերտը.**

Երկրի ամենավերին և ամենաբարակ շերտն է: Այն կազմված է համեմատաբար թեթև ապարներից: Այդ շերտն է.

1) Երկրի միջուկը
2) ստորին միջնապատյանը
3) երկրակեղևը
4) վերին միջնապատյանը

8 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հանգած հրաբուխներ են Վեզուվը և Կրակատաուն:
2) Շատ գեյզերներ կան Կամչատկա թերակղզում:
3) Երկրի ընդերքում այն տեղը, որտեղ առաջանում են ապարաշերտերի կտրուկ տեղաշարժեր, կոչվում է երկրաշարժի օջախ:
4) Գեյզերների տաք ջրերը մարդիկ օգտագործում են ջերմոցները և բնակարանները տաքացնելու համար:

9 **Ի՞նչ գազ է արտազատվում լուսասինթեզի ժամանակ.**

1) ածխաթթու գազ
2) թթվածին
3) ազոտ
4) օզոն

10 **Ո՞ր զոնայում են ապրում փիղը և ընձուղտը.**

1) անապատ
2) սավաննա
3) տափաստան
4) խառը անտառ

11 **Գետի անկումը 800 մ է, երկարությունը՝ 200 կմ: Որքա՞ն է գետի միջին թեքությունը.**

1) 2 մ/կմ
2) 4 մ/կմ
3) 6 մ/կմ
4) 8 մ/կմ

12 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մուսսոնային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
2) Հասարակածային գոտու գետերը հորդանում են ամռանը:
3) Սառցադաշտային սնում ունեցող գետերը հորդանում են աշնանը:
4) Միջերկրածովյան կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:

13 **Բնութագրումով որոշել բնական զոնան.**

Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր գրեթե չեն աճում, և տարածված են մամուռներ ու քարաքոսներ: Ո՞ր բնական զոնան է.

1) սառցային
2) սավաննա
3) տունդրա
4) տայգա

14 **Տափաստանների բնական զոնան հիմնականում ո՞ր հողերի վրա է տարածվում.**

1) սևահողերի
2) կարմրագորշ
3) դարչնագույն
4) կարմրադեղին

15 **Ո՞ր լեռն է ամենաբարձրը Անտարկտիդայում.**

1) Մոնբլան
2) Էլբրուս
3) Էրեբուս
4) Վինսոն

16 **Ո՞ր պնդումն էճիշտ.**

1) Մեծ ջրբաժան լեռնաշղթան ունի հրաբխային ծագում:
2) Մուրեյ գետը սկիզբ է առնում Էյր լճից:
3) Ավստրալիայի ներքին շրջաններում տեղումներն առատ են:
4) Ավստրալիայում սառցադաշտեր չկան:

17 **Հարավային Ամերիկայի արևմտյան ափով ո՞ր ծովային հոսանքն է անցնում:**

1) Պերուական
2) Գվիանական
3) Բրազիլական
4) Ֆոլկլենդյան

18 **Ընտրել Հարավային Ամերիկայի հարթավայրերի և դրանց բնութագրիչների համապատասխանությունների ճիշտ շարքը.**

ա. Պատագոնիա բ. Բրազիլական գ. Լա Պլատայի դ. Ամազոնի	1. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի արևելք, առավելապես տարածվում են խոնավ հասարակածային անտառներ: 2. Սարահարթ է, կիսաանապատ, տարածվում է բարեխառն գոտում: 3. Ընդարձակ հարթավայր է, կան պլատֆորմի կարծր բյուրեղային հիմքի մերկացած տեղամասեր՝ վահաններ, տարածվում են սավաննաներ՝ կամպոս: 4. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի հարավ, նրա միջով է հոսում Պարանա գետը:

1) ա–2, բ–3, գ–1, դ–4
2) ա–3, բ–1, գ–2, դ–4
3) ա–2, բ–3, գ–4, դ–1
4) ա–3, բ–2, գ–4, դ–1

19 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Հյուսիսային Ամերիկան ամբողջությամբ արևմտյան կիսագնդում է:
2) Հյուսիսային Ամերիկայի փոքր մասը հարավային կիսագնդում է:
3) Հյուսիսային Ամերիկան Հարավային Ամերիկային միանում է Պանամայի պարանոցով:
4) Հյուսիսային Ամերիկան Եվրասիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:

20 **Ո՞ր զույգն է *սխալ.***

1) Լաբրադոր թերակղզի — Լաբրադորի նեղուց
2) Կալիֆոռնիա թերակղզի — Կալիֆոռնիական ծոց
3) Ալյասկա թերակղզի — Ալյասկայի ծոց
4) Ֆլորիդա թերակղզի — Ֆլորիդայի նեղուց

21 **Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Կապի և Դրակոնյան լեռները հին, քայքայված լեռներ են:
2) Աֆրիկայի հիմքում ընկած է Գոնդվանա հնագույն խոշոր ցամաքի մասը կազմող Աֆրիկական պլատֆորմը:
3) Աֆրիկայի մակերևույթում տիրապետում են սարահարթերը:
4) Աֆրիկայում ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հասարակածային գոտում:

22 **Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արևմուտքում գտնվող Կամերուն գործող հրաբուխը մայրցամաքի ամենախոնավ շրջանն է:
2) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը ռելիեֆն է:
3) Մայրցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ճնշման 4 մարզ՝ երկու բարձր, երկու ցածր:
4) Կանարյան սառը հոսանքը մեծ դեր է խաղացել Սահարա անապատի առաջացման գործում:

23 **Եվրասիայի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում:
2) Տարածքում ձևավորվում են օդային զանգվածների բոլոր չորս հիմնական տիպերը:
3) Տարածքի մեծ մասի կլիման ձևավորվել է բարեխառն օդային զանգվածների ազդեցությամբ:
4) Մայրցամաքի հյուսիսն ամբողջ տարին անտարկտիկական ցուրտ և չոր օդային զանգվածների ազդեցության տակ է:

24 **Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևոր իրադարձություն չէ.**

1) ԽՍՀՄ–ի կազմավորումը
2) Ավստրո–Հունգարիայի փլուզումը
3) ԱՄՆ–ի կազմավորումը
4) Օսմանյան կայսրության փլուզումը

25 **Դիագրամում տրված է երկրագնդի բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում Ա տառը.**

1) մինչև 200 մ
2) 200-500 մ
3) 500-1000 մ
4) 1000-2000 մ



26 **Պետության բնակչության թիվը 200 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 50 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.**

1) 75%
2) 50%
3) 40%
4) 25%

27 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Համաշխարհային տնտեսությունն (ՀՏ) աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների փոխկապակցված ամբողջությունն է:
2) ՀՏ–ի տարածքային միավորները վերազգային ընկերություններն են:
3) ՀՏ–ն մինչև 19–րդ դարի վերջը ուներ միակենտրոն բնույթ, այժմ բազմակենտրոն է:
4) ՀՏ-ի զարգացման փուլերից է արդյունաբերականը:

28 **Համաշխարհային տնտեսության ճյուղերից ո՞րն է առաջատար աշխատողների թվով.**

1) արդյունաբերությունը
2) ծառայությունների ոլորտը
3) գյուղատնտեսությունը
4) տեղեկատվական ոլորտը

29 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Համաշխարհային թեթև և սննդի արդյունաբերության հիմնական հումքային բազան գյուղատնտեսությունն է:
2) Թեթև և սննդի արդյունաբերության տեղաբաշխումը համատարած է, քանի որ բոլոր երկրներում էլ կա:
3) Թեթև և սննդի արդյունաբերությունը հիմնականում թողարկում է սպառման արտադրանք:
4) Թեթև և սննդի արդյունաբերությունը տնտեսության նորագույն ճյուղերն են:



քարտեզ 1

30 **Ո՞ր պետությունն է քարտեզ 1– ում նշված Ա տառով.**

1) ՀԱՀ
2) Քենիա
3) Չադ
4) Լիբիա

31 **Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1– ում նշված Բ տառով.**

1) Ադիս Աբեբա
2) Կահիրե
3) Անտանանարիվու
4) Ռաբաթ

32 **Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Բոլոր երկրները չունեն ելք դեպի ծով:
2) Բնակչության մեծ մասը խոսում է թյուրքական լեզվախմբի մեջ մտնող լեզուներով:
3) Բարձր է բնակչության միջին խտությունը:
4) Գերիշխող կրոն է մահմեդականությունը:

33 **Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տարածաշրջանի մեջ են մտնում Արաբական և Հինդուստան թերակղզիները:
2) Այստեղ են առաջացել քրիստոնեություն և բուդդայականություն կրոնները:
3) Երկրների մեծ մասի բնակչության կազմում գերակշռում են կանայք:
4) Բարձր է բնակչության բնական աճը:

34 **Ո՞ր մշակաբույսի աճեցմամբ է Իտալիան աշխարհում առաջատար.**

1) կակաոյի
2) սուրճի
3) խաղողի
4) ցորենի

35 **Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում *չեն.***

1) Կոլումբիան և Պերուն
2) Կանադան և Շվեդիան
3) Կուբան և Ուրուգվայը
4) Արգենտինան և Չիլին

36 **Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Գառան մսի արտադրությամբ աշխարհում առաջինն է:
2) Աշխարհում առաջատարներից է ալյումինի հումքի՝ բոքսիտների արդյունահանմամբ և արտահանմամբ:
3) Երկրում մշակվող գլխավոր հացահատիկային մշակաբույսը ցորենն է:
4) Բնակչությունը հիմնականում կենտրոնացած է հարավարևմտյան շրջաններում:

37 **«Օգտակար հանածո—հանքավայր» զույգերից ընտրել *սխալը.***

1) քարածուխ — Ռուրի ավազան
2) պղինձ — Անդերի լեռներ
3) գազ — Հյուսիսային ծով
4) երկաթ — Պարսից ծոց

38 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) «Ժողովրդագրական պայթյունը» կանխելու նպատակով երկիրը վարում է բնակչության աճի կրճատման ժողովրդագրական քաղաքականություն:
2) Բնակչության թվաքանակով աշխարհի երրորդ պետությունն է Չինաստանից և Հնդկաստանից հետո:
3) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:
4) Երկրի տարածքում բնակվող մեծաթիվ ժողովուրդներից են չուվաշները:

39 **Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հարուստ է սառցադաշտային ծագման լճերով:
2) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
3) Բոլոր երկրներն ունեն ելք դեպի Համաշխարհային օվկիանոս:
4) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են քաղաքային բնակավայրերը:

40 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Եվրոպական այս պետության անունը թարգմանաբար նշանակում է սառցե երկիր: Սակայն այն բացառիկ հարուստ է գեյզերներով: Երկրաջերմային էներգիան լայնորեն կիրառվում է բնակարանների և ջերմոցների ջեռուցման համար: Ո՞րն է այդ պետությունը.

1) Իռլանդիան
2) Ֆինլանդիան
3) Իսլանդիան
4) Նորվեգիան

41 **Հայկական պար լեռնաշղթայի վրա է.**

1) Գայլատու լիճը
2) Քարի լիճը
3) Կապուտան լիճը
4) Պարզ լիճը

42 **Ո՞ր լեռնաշղթան ՀՀ հարավում չէ:**

1) Զանգեզուրի
2) Վայքի
3) Վիրահայոց
4) Մեղրու



քարտեզ 2

43 Քարտեզ 2–ում Ծաղկունյաց լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

1) Ա
2) Բ
3) Գ
4) Դ

44 Քարտեզ 2–ում Սպանդարյանի ջրային էլեկտրակայանը ո՞ր տառով է նշված.

1) Զ
2) Ե
3) Է
4) Ը

45 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Արտաշատ և Արմավիր քաղաքները ցեմենտի արտադրության կենտրոններ են:
2) Քաջարան և Ախթալա քաղաքները զարգացել են իրենց մոտակայքում գտնվող հանքային հարստությունների առկայության և շահագործման շնորհիվ:
3) Մեծամորը և Ծաղկաձորը միագործառութային քաղաքներ են:
4) Գյումրի և Վանաձոր քաղաքները վարչական, գիտակրթական ու մշակութային կենտրոններ են, արդյունաբերական, երկաթուղային ու ավտոխճուղային ճանապարհների հանգույց:

46 **ՀՀ ո՞ր բնակավայրը առողջարանային *չէ.***

1) Հանքավանը
2) Ագարակը
3) Դիլիջանը
4) Արզնին

47 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) ՀՀ տնտեսությունը մեծապես կախված է ներմուծվող էներգակիրներից:
2) ՀՀ տնտեսությունն ունի բազմաճյուղային կառուցվածք:
3) ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում ամենամեծը տրանսպորտի և կապի բաժինն է:
4) ՀՀ–ն անցումային տնտեսություն ունեցող երկիր է:

48 **Երկաթուղային կայարաններ են.**

1) Գորիսը և Սիսիանը
2) Մարալիկը և Արթիկը
3) Գավառը և Մարտունին
4) Վայքը և Եղեգնաձորը

49 **Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Ցածրադիր գոտու ռոգելի հողերում տարածված է խաղողագործությունը և պտղաբուծությունը:
2) Մարզի զարգացման գործում մեծ դեր ունի առողջարանային տնտեսությունը:
3) Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասն արոտավայրեր են:
4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են թռչնաբուծությունը և խոզաբուծությունը:

50 **Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած *չէ.***

1) գինու-կոնյակի արտադրությունը
2) պղնձաձուլությունը
3) քիմիական արդյունաբերությունը
4) պանրի արտադրությունը

51 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:
2) Ջերմոցային էֆեկտի ազդեցության մեծացումը պայմանավորված է մթնոլորտում մեթանի և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:
3) Օզոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:
4) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառն Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:

52 **Էլեկտրակայանների տեսակներից ո՞րն է ամենաշատն աղտոտում մթնոլորտը.**

1) ջրային
2) ջերմային
3) հողմային
4) արևային

53 **Ընդերքի ռեսուրսների որոշ տեսակներ խնայելու արդյունավետ միջոցառում է.**

1) անընդհատ նոր հանքավայրերի շահագործումը
2) շահագործվող հանքավայրերում պոչամբարների ստեղծումը
3) մետաղների փոխարինումը սինթետիկ նյութերով
4) փակ եղանակով արդյունահանման փոխարինումը բաց եղանակով

54 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Անտառապատ տարածքների կրճատման հետևանք է թթվային անձրևների առաջացումը:
2) Կոնսումենտները սննդառության շղթայի այն օղակն են, որոնք անօրգանական նյութերից սինթեզում են օրգանական նյութեր:
3) Արգելոցը ցամաքի կամ ջրային տարածքի տեղամաս է, որտեղ պահպանվում են բնական միջավայրի կամ կենդանի օրգանիզմների մեկ կամ մի քանի տեսակներ:
4) Շրջակա միջավայրի մոնիթորինգը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումն է, գնահատումն ու վերահսկումն է:

55 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչներն են երկարակեցությունը, կրթվածությունը և կենսամակարդակը:
2) Պարենային հիմնախնդիրը բնորոշ է մեծամասամբ զարգացած երկրներին:
3) Զարգացող երկրների մեծ մասի տնտեսության մեջ գերակշռողը ծառայությունների ոլորտն է:
4) Սովյալների և թերսնվողների գոտին ձգվում է առավելապես հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնություններում:

56 **Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.**

1) կերակրիաղ
2) կվարց
3) օբսիդիան
4) կավիճ
5) տուֆ
6) գնեյս
7) գրանիտ
8) բազալտ

57 **Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել անձրևային սնում ունեցող գետերի համարները.**

1) Օրինոկո
2) Սիրդարյա
3) Կոնգո
4) Կոլումբիա
5) Օբ
6) Պարանա
7) Մեկոնգ
8) Մակենզի

58 **Տրված են ծովային հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.**

1) Գվիանական
2) Կուրո Սիո
3) Սոմալիի
4) Բենգելյան
5) Գոլֆստրիմ
6) Մոզամբիկի
7) Ալյասկայի
8) Գվինեական

59 **Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.**

1) սլավոնական
2) ռոմանական
3) գերմանական
4) թյուրքական
5) քարթվելական
6) իրանական
7) սեմական
8) հայկական

60 **Գրել այն երկրների համարները, որոնք մերձծովային են.**

1) Ալժիր
2) Բելգիա
3) Մոլդովա
4) Հունգարիա
5) Շվեդիա
6) Շվեյցարիա
7) Մոնղոլիա
8) Բոլիվիա

61 **Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք ջրային *չեն.***

1) Վանաձորի
2) Քանաքեռի
3) Մեծամորի
4) Արզնիի
5) Զորագետի
6) Տաթևի
7) Շամբի
8) Սևանի

62 Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել դրանց հոսքի ուղղության արևմուտքից արևելք, հյուսիսից հարավ, հարավից հյուսիս հաջորդականությամբ.

1. Ճորոխ 2. Արաքս 3. Ախուրյան

63 Տրված են տարբեր բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրեր: Դասավորել բարձրության նվազման կարգով.

1. դաշտավայր 2. սարահարթ 3. ցածրավայր 4. բարձրավայր

64 Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ օդի ջերմատիճանը՝ +25°C: Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը +10°C է (հաշվարկը կատարել 5°C–ով). Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

65 Ինչքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 3 տ նավթի այրումից (ջերմային գործակիցը՝ 1,5):

66 Պետության բնակչության թիվը 1 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ: Որոշել բնակչության բնական աճի գործակիցը (‰):

67 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 38°, արլ. ե. 147°: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:

68 Երկրի նավթի պաշարները կազմում են 6,8 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 170 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսապահովվածությունը:

69 **Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
2) Թույլ է ապահովված հումքի և վառելիքի սեփական պաշարներով:
3) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
4) Ավտոճանապարհային ցանցի համար բնորոշ են արագընթաց լայնահուն մայրուղիները:
5) Բեռնաշրջանառության մեջ մեծ է գետային տրանսպորտի բաժինը:
6) Արտահանման մեջ գերակշռում են մեքենաներն ու սարքավորումները:

70 **ՀՀ անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Թռչնաբուծական ֆաբրիկաներն առավելապես տեղաբաշխված են խոշոր քաղաքների կամ արդյունաբերական կենտրոնների մոտակայքում:
2) Ոչխարաբուծությունն առավել զարգացած է նախալեռնային և լեռնային շրջաններում:
3) Արոտավայրերի գերբեռնվածությունը և գերարածեցումը բնապահպանական հիմնախնդիրներ են առաջացնում:
4) Խոշոր եղջերավոր անասնաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ խիստ անհամաչափ է տեղաբաշխված:
5) Անասնապահության համախառն արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում մանր եղջերավոր անասնապահությանը:
6) Խոզաբուծությունն առավել զարգացած է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում: